



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

14 հոկտեմբերի 2019 թվականի թիվ 389 -Ա

ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի 2019 թվականի տարեկան ծրագրով՝

կարգադրում եմ

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Բերդավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 2019 թվականի հոկտեմբերի 16-ից մինչև հոկտեմբեր 21-ը ներառյալ՝ 4 աշխատանքային օր, իրականացնել համապատասխանության աուդիտ հետևյալ կազմով՝

Անժելա Սիմոնյան - մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ

Հերմինե Դավթյան - մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ:

2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Տավուշի մարզի «Բերդավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 2017 և 2018 թվականինների ընթացքում իրականացված ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախատեսված և կատարված ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Տավուշի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի վարիչի ժ/պ Արտեմ Ոսկանյանին:

Հ. ՉՈՐԱՆՅԱՆ

15.10.2019

X

14 հոկտեմբեր 2019թ.
ք. Իջևան